ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունիսի 2-ին, հինգշաբթի.—Տօն Սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին:

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Գրիգոր ավ. քհն. Տերտերյանը: «Հայր մեր»-ից առաջ օրվա տոնին պատշաճող քարոզ խոսեց Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը:

* * *

Հունիսի 4-ին, շաբաթ.—Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի Վիրապէն:

Այսօր Մայր տաճարում, Իջման ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Նաթան ծ. վրդ. Հովհաննիսյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

* * *

Հունիսի 5-ին, կիրակի.—Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց մաղթանք Ս. Էջմիածնի:

* * *

Հունիսի 11-ին, շաբաթ.—Սրբոցն Ներսիսի Մեծի Հայրապետին մերոյ և Խադայ եպիսկոպոսին:

Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս քհն. Մելիքյանը:

* * *

Հունիսի 12-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Թադեոս վրդ. Զիրեկյանցը:

* * *

Հունիսի 18-ին, շաբաթ.—Գիտ ճշխարաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր ավ. քհն. Ֆրանկյանը:

* * *

Հունիսի 19-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խորեն քհն. Մարուքյանը:

* * *

Հունիսի 26-ին, կիրակի.—Գիտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս քհն. Մելիքյանը:

* * *

Հուլիսի 2-ին, շաբաթ.—Սրբոց երկոտասան առաքելոցն Քրիստոսի և Սրբոյն Պօղոսի երեքտասաներորդ առաքելոյն:

Այսօր Ս. Գայանե եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

Հուլիսի 3-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Արշակ ավ. քհն. Խաչատրյանը:

* * *

Հուլիսի 9-ին, շաբաթ.—Յիշատակ Տապանակին հնոյ և տօն նորոյս Սրբոյ Եկեղեցւոյ:

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

* * *

Հուլիսի 10-ին, կիրակի.—ՎԱՐԴԱՎԱՌ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Ոսկան եպս. Գալֆաքյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց (Տես էջ 27):

* * *

Հուլիսի 11-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Նշան ավ. քհն. Բեյլերյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ «Վասն համօրէն ննջեցելոց»:

* * *

Հուլիսի 16-ին, շաբաթ.—Սրբոցն Թադէոսի առաքելոյն մերոյ և Սանդըխտոյ կուսին:

Այսօր Ս. Աստվածածին եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը: «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Վրաստանի թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

* * *

Հուլիսի 17-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Կանադայի Հայոց Ս. Վարդան եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Գեղարդ քհն. Կարապետյանը:

* * *

Հուլիսի 23-ին, շաբաթ.—Սրբոց որդւոց և թոռանց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի և Դանիէլի:

Այսօր Ս. Գայանե եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Խորեն քհն. Մարուքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Հուլիսի 24-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Տիրան քհն. Գըլըճյանը:

* * *

Հուլիսի 30-ին, շաբաթ.—Սրբոյն Գրիգորի Աստուածաբանին:

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբղ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

* * *

Հուլիսի 31-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Թադեոս վրդ. Զիրեկյանցը: